

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՈՅՅԱՆ-ՈՅՅՐ

ՀԱՏՈՐ

ՀԹ

1922

ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԹԻՒ 9



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ԶԵՆՈՒԲԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ԼՈՒԱՑՈՒՄՆ ՈՏԻՑ ԱՇՍԿԵՐՏԱՅ


(Շար. տես 1922 թվ. էջ 226)

Սկսան հարցանել ցմրմանս և ասել, ի՞նչ է ո՞վ ի՞նչ է մէնջ որ զայն գործելոց ի՞նչ է, զոր դպիրքն և փարխեցիք անգամ ոչ կարացին գործել. ո՞վ ի՞նչ է մէնջ որ զայն վայն զգենլոց ի՞նչ է, և ո՞վ ի՞նչ է մէնջ որում լաւ լինալ էր, թէ և բնաւ յաշխարհս չէր եկեալս Գարձաւ տաւնն՝ նոցա ի սուգ, և երեկոյն ուրախութիւնն՝ ի տրտմութիւն. Սկսաւ Շմաւոն առ չժուժալ

սրտին՝ ակնարկել՝ Յոհաննու զի հարցցէ՛ թէ ո՞վ ի՞նչ է որ մատնելոց ի՞նչ է զնա, զի փարատեացի ի նոցանէ՝ սուգն, և՛ զգեցան զմիւսն ևս զանհնարին տրտմութիւնն. Գաւգի՛ երկու սուգ զգեցեալ էին ի ժամունք, մի՛ զի մեռանելոց էր վարդապետն, և միւս ևս՝ զի ի նոցա ձեռս մեռանէր, էւ զի՛ հանգուցէ Տէրն Յոհաննու որ եհարց ևս զտաան ընկերսն զգացեալս, ասէ. Ո-

1. Ե՛. տաւն.
2. Ե... ուրախութեան. — Հ. երեկոյին ուրախութիւն նոցա.
3. Ե. և ոչ ժուժալով ակնարկէր. — Հ. առ չժուժալով ակնարկել.
4. Ե. հարցանէր. — Հ. հարցէ.
5. Ե. է որ մատնելոցն է զնա ի փարխեցիք. — Հ. կը տարբ. Ե. եւ փարատեացի.

6. Ե. յաւելոս մի.
7. Ե. զի զգեցցին զմիւսն անհնարին տրտմութիւն, զի. — Հ. զի զգեցցցին զմիւս անհնարին տրտմութեամբ, զի.
8. Ե. ի ժամանակին յայնմիկ. — Հ. ի ժամուն յայնմիկ.
9. Ե. և մի. զի ընդ նոցա. (յուրի և). — Հ. և մի զի ի նոցա. միւսն է՛ ժողովարարն. [ԶԲ].



բում¹ և թացից ի սակաւառակս² և տաց³ նա՛ է որ մատնելոց⁴ է զիս: Եւ⁵ զինչ հարկ էր պատառո՞վն յանդիմանել, և ոչ բանիւր: Ձի թէ բանիւր ասացեալ էր՝ Յոհաննէս միայն լինէր վկայ իրացն, այլ թաց զպատառն և տաց: զամենայն աշակերտսն արար վկայ իրացն, զի թէպէտ ակամջաւքն ոչ լուան զանուն մատնչին՝ սակայն աշաւք տեսին զպատառն թացեալ, որ տուաւ իրրե նշանս:

Յուդա իրրե ետես եթէ նայեցան աշակերտքն ընդ միմեանս՝ ապա սկսան ընդ նա պշնուլ, գիտաց և ինքն եթէ նա է զորմէ ասէ տէրն՝ հնարեցաւ ի պատճառս հարցումոյ ապրել ի պատուհասէն. կամեցաւ ասել յառաջագոյն ընդ ընկերսն. Միթէ քն իցեմ վարդապետ. և երկեաւ, մի՛ գուցէ ասիցէ թէ Այո, դու ես: Իրրե ետես եթէ զառաջինն ոչ կացոյց ի վերայ ստուգոջ, կարծեաց թէ և ի նմանէ իրրե յայլոցն զանց անիցէ, և յայն ապաստանեցաւ ասել, մանաւանդ իրրե զպատառն առ և ասէ: Միթէ քն իցեմ. ասէ ցնա տէրն. Դու ասացեր:

Խոցեցաւ սիրտն Յուդայի իրրե ետես եթէ անյայտ նշանան⁶ և յայտնի՝ բանին և մեկնեաց յամենեցունց՝: Գնալի⁷ Յուդայի միտքն քան զամենեցուն և ասկածէին՝ զաղտազողի ի տէրն հայէր, թէ գուցէ զոյգն ինչ կանարկեալ կամ մեղմ բանիւր՝ առակիցէ առաջի ամենեցուն, մանաւանդ իրրե ետես ևս զՅոհաննէս եթէ ի ժամ տրտմութեանն՝ անկաւ զլանջաւքն տեսն, և սկսաւ զաղտ շշջջել: Գիտաց եթէ զնմանէ հարցանէ, մանաւանդ իրրե

ետես եթէ անդէն ընդ հարցումսն՝ թէ պատառ ևս ըստ սովորութեանն եթաց և՛ ետ նմա, թացեալ հացին¹⁰: Նորոգ¹¹ որոշեցաւ ի կենդանի հացէն՝ զոր առնուն¹² առժամայն աշակերտքն. նորոգապէս լուացեալ¹³ հացին՝ յարհնութենէն մեկնեաց զայն¹⁴ որ ի չար խորհուրդս խառնակեցաւ ընդ խաչահանունսն անիւծեալսն:

Իրրե ետես Յուդա՝ եթէ պատառո՞վն մեկնեաց յընկերացն՝ առաւել ևս եմուտ ի նա սատանայ, զի զոր ինչ կանխեաց ասաց բանիւր՝ փութացի կատարել արդեամբք: Սակայն և զայն ոչ եթող տէրն՝ եթէ ոչ յայտնեաց՝ յասելն եթէ Ձոր ինչ անելոց քս արա՛ վաղվադակի: Թէպէտ ևս Յոհաննէս ի պատառոյն որ տուաւ Յուդայի՝ գիտաց եթէ նա է որ մատնելոց է գնա՛ չև ևս եղև տեղի Յոհաննու աշակերտել զնոսաւ. կարծեցին եթէ հրաման ինչ առ Յուդա գնել ինչ ի պէտս տաւնին, և կամ տուրս ինչ տացէ աղքատաց:

Իսկ Յուդա իրրե լուաւ ի տեսնէ՝ Դու ասացեր. յարեաւ մեկնեաց զանձն յաշակերտացն. երթեալ խառնեցաւ ի զունդս խաչահանուացն: Առ ընդ իւրե զհացն զոր եթաց նմա տէրն, զի յորժամ անարգեացէ զարհնութիւնն ի մէջ խաչահանուացն՝ ստուգեսցի ի միտս նոցա՝ թէ արդարև մատնելոց է զվարդապետն ի մահ: Եւ տէրն քանզի գիտաց յառաջագոյն թէ անդ տանելոց է զհացն զոր առ՝ զի անարգեացէ ինքն և խաչահանունքն՝ կանխեաց լուաց զարհնութիւնն ի հացէն, և ապա ետ մատնչին, զի հացն ընկալցի

1 Ե. զտառն ևս ընկերս ստացեալս: Յայնժամ ասէ տէրն, որում: — Հ. զտառն(ս)ին զընկերսն զգտեալս. (աս)է, որում:

2 Ե. ի սկաւառակիս: — Հ. ի սկաւառակէս:

3 Ե. յաւելու պատառ: — Հ. լուեմի:

4 Ե. մատնեցոյն:

5 Ե. լուեմի միմեա զու ասացեր:

6 Ե... նշանաւք: — Հ. եթէ եկն յայտնի նշանին:

7 Ե. Բանիւր որոշեաց ի նոցանէ:

8 Ե. Լուեմի միմեա զնմանէ հարցանէ:

9 Ե. (լուեմի թէ) և պատառս ըստ ոչ սովորութեանն թաց և: — Հ. (լուեմի թէ) և պատառ ևս ըստ ոչ սովորութեանն թացեալ (լուեմի և):

10 Ե. յաւելու զոր անոյր: Հ. — յաւելու զոր առ:

11 Ե. լուեմի:

12 Ե. անելոց էին:

13 Ե. նորոգապէս լուացեալ:

14 Ե. Լուեմի, սկսեալ զայնէ միմեա կամեցաւ ցոյցանել թաւանդէ:

գլխամանն ի խորհուրդս մարմնոյն, և աւրհնութիւնն ապրեացի յանարգանացն՝ ի նմանութիւն աստուածութեանն, որ ոչ էր չարչարելոյ ի չարչարանաց խաչահանուացն, յեան Եփրեմի երանելոյ աւացեալ է՝ եթէ խորհուրդ սպանման տեառն մերոյ նկարեցաւ ի ժամուն, զի հացիւն

զոր ետ յանարգանս՝ զմարմնոյն յայտ աւար բթէ մատնելոց է ի չարչարանս, և զի եթաց և ապա ետ՝ զկատարեալ խորհուրդ սպանման կամեցաւ ցուցանել Թանալովն, Տէր ինքնին ետ՝ զհացն Յուդայի, նոյն ինքն մատնեաց զանձն հրէյցն, (Շարունակելի) Հրատարակեց Հ. Ղ. Տ.

ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿ

ՐԷՍՏԵՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՅՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

(Շար. տես Բզմ. 1922 էջ 198)

Գ. Գլուխը կը խօսի՝ իփրեու (colique) վրայ, որոնց զանազան տեսակներն են՝ փքական (colique ventouse), մաղաւիկ (biliose), արգանդեան (hystérique), զոյակ (nerveuse)։

Գ. Գլուխին նիւթն է՝ Diabèteր՝ զոր ընտէն կը թարգմանէ, «Ստատիկ հոտումն միգի», և կը նկարագրէ զայն իւր բոլոր նշաններովը, բայց շարքի խօսք ընաւ չ'ընենք. կ'երևի թէ դեռ անձանթ էր այս իրեն։

Ե. Գլուխը նիւթ ունի՝ անժոժկարութիւն կամ անժոժութիւն միգի, այսինքն՝ incontinence des urines. Իսկ Զ.ը անմիգութիւն կամ միգադիգութիւն (rétention des urines)։

Է. Գլուխը կը խօսի՝ Երիկամների աւազի կամ քարերու վրայ։

Ը. Գլուխը՝ նախ՝ ջրոգորքեան (Hydropisie) վրայ ընդհանրապէս, և յետոյ մասնաւորապէս ալ՝ կործրի ջրոգորքեան (Hydropisie de la poitrine), զիի ջրոգորքեան (Hydrécéphalie) վրայ։

Թ. Գլուխին նիւթն է՝ դարուկը (ictère, jaunisse)։

Ժ. ինը բոքախտութիւն կամ բարակցա (phtisie), որուն մէջ կը խօսի նաև զոյակի բոքախտութեան (phtisie nerveuse) վրայ։

ԺԱ. Գլուխը նուիրուած է շնչարգեւոյ.

բեան (asthme), իսկ ԺԲ.ը կանանց հիւանդութիւններու առ հասարակ. ասոնց զլիաւորն է դաշտանը և իր ամէն տեսակ խանգարումները ու այդ խանգարումներէն առաջ եկած տոգունութիւնը (Chlorore) սպիտահոտութիւնը (Leucorrhée), ամուրիութիւնը (stérilité), ևայլն։

ԺԳ. Գլուխին նիւթն է՝ ցոլախտութիւն, այսինքն՝ ջրային ամենակերպ հիւանդութիւնները, ԺԴ. ինը՝ դժուարամարտութիւնը (dyspepsie) իւր զանազան զարտուղութիւններով։

ԺԵ.ին մէջ կը խօսի անդամաշոժութեան կամ կարուածի (paralysie) և կիսակարուածի (Hémiplégie) վրայ։

ԺԶ.ին նիւթն է՝ Լուսնոտութիւնը կամ վերնոտութիւնը (Epilepsie)։

ԺԷ.ինը՝ Սևամազոքութիւնը (Mélancolie), յիմարութիւնը, կատաղութիւնը և մոլեգնութիւնը։

ԺԸ. կը խօսի՝ փքախտութեան վրայ։

ԺԹ. ուշագնացութեան (perte de Connaissance)։

Ի.ը Գլխացաւութեան (Céphalalgie) վրայ։

Յետոյ կարգաւ կու գան՝ առամնացաւութիւն (odontalgie), ցնցական ախտ երախաւ.

1. Ե. տէրն որ ինքն ետ. — 2. տէր որ...